ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-4/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 03.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Մ. Ջիլավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2023թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-23-4/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 13 200 000 (տասներեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Տավուշի մարզ, Նոյեմբերյան 4101,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հաղթանակ բնակավայր, 1փ. 2նրբ. Տ 3
Հ/Հ 900011024537	«Այդի բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 11811024697200
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 07626235
	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Մ. ՋԻԼԱՎՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-4/2-2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ	Ապրանքի մատակարարումը 2023թ. ըստ եռամսյակների, ընդ որում, բայց ոչ ուշ, քան 30.11.2023թ.,		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(8)	Փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ)	հատ	400	33 000	13200000	100	200	100

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-4/2-2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 11.12.2023թ., ընդ որում		
Հ/h	անվանումը	CPV կոդը	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(8)	Փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ)	44611560/505	3 300 000	9 900 000	13 200 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ
տնօրեն

Մ. ՋԻԼԱՎՅԱՆ